Արձանագրություն N 2

ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 հոկտեմբերի 2024թ.

ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Հովհաննիսյանը, անդամներ՝ Էդվարդ Ավետիսյանը, Ռուդիկ Կարապետյանը և գնումներ համակարգող, ընթացակարգի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը:

Օրակարգ

Հրավերի պարզաբանման մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինարարական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Գոհար Թադևոսյանը տեղեկացրեց, որ 2024 թվականի հոկտեմբերի 25-ին մասնկիցը էլեկտրոնային փոստի միջոցով պահանջում է հրավերի պարզաբանում:

Ստորև ներկայացվում է հրավերի վերաբերյալ 25.10.2024թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 28.10.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում	Պարզաբանում
Հարցադրում 1. Հայտնում ենք, որ մեր կազմակերպությունն ունի ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի 63-րդ կետով ներկայացված «Ներկ լատեքսային» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրերին համապատասխանող ներկ՝ ԾԻԱԾԱՆ մակնիշի/ֆիրմայի, որն իր տեխնիկակն հատկանիշներով և պարամետրերով չի զիջում վերոնշյալ չափաբաժնում նշված մակնիշի/ֆիրմայի ներկերին: Խնդրում ենք պարզաբանել, ընդունելի է արդյոք Ձեզ համար մեր կողմից առաջարկվող մակնիշի/ֆիրմայի լատեքսային ներկը:	**Պարզաբանում 1.** ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի հարվերը հրապարակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետը և ՀՀ կառավարության 13.10.2022թ. N 1593-Ն որոշմամբ սահմանված կարգավորումների կիրառման վերաբերյալ շրջաբերականի 3-րդ կետի «դ» ենթակետը, այն է ապրանքների գնման հայտը նախագծելիս, եթե տեխնիկական բնութագրերում պետք է օգտագործվեն հղումներ, ապա դրա փոխարեն սահմանվում են պատվիրատուի կարիքի բավարարման տեսակետից որպես համարժեք համարվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: Սույն կետի կիրառման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրերում նշված ապրանքները: Քննարկվող կարգավորման կիրառման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրերում նշված ապրանքները, իսկ հայտերի գնահատման փուլում բավարար է գնահատվում միայն հրավերում նշված բնութագիր (ֆիրմային անվանում, մոդել և արտադրող) ունեցող ապրանքը:

Հարցադրում 2. ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնով ներկայացված է գիպսոնիտ ապրանքատեսակը, որը /հենց գիպսոնիտ բառը/ հանդիսանում է հղում առևտրային/ապրաքնային/ նշանին կամ ֆիրմային անվանմանը/կից ներկայացվում է նկարը/: Մեր կազամկերպությունն ունի TERMOFIX առևտրային/ապրաքնային/ նշանով ձեր կողմից պահանջված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքատեսակ: Խնդրում ենք պարզաբանել՝ Ընդունել է արդյոք Ձեր կողմից TERMOFIX առևտրային/ապրաքնային/ նշանով մեր կողմից առաջարկվող ապրանքը: Միաժամանակ կարծում ենք, որ ընդունելի չլինելու դեպքում խախտվում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները: 	**Պարզաբանում 2.** Տեղեկացնում ենք, որ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի մեջ «Գիպսոնիտ» տերմինը օգտագործվել է որպես գիպսային սվաղի անվանում, և մենք նկատի ունենք գիպսային սվաղ, ոչ թե որևէ կոնկրետ բրենդ: Մեր համար ընդունելի են բոլոր բրենդների առաջարկները, որոնք համապատասխանում են պահանջվող չափանիշներին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անուն ազգանունները և ստորագրությունները.

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Սամվել Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Էդվարդ Ավետիսյան

_____ Ռուդիկ Կարապետյան

Գնումներ համակարգող (ընթացակարգի քարտուղար)՝ _____ Գոհար Թադևոսյան